

Զեկույց

Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին
/25.08.2017թ /

Մեծարգո Վարչապետ, հարգելի ներկաներ

Ձեր թույլտվությամբ կներկայացնեմ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակի մասին հակիրճ տեղեկատվություն՝ ըստ առանձին բնագավառների համեմատական թվերով, իսկ մարզպետարանի առանձին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները հանդես կգան իրենց ոլորտներում իրականացված աշխատանքների և փաստացի վիճակի մասին հաշվետվություններով:

ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքը զբաղեցնում է 5348 կմ², բնակչության թիվը 2016թ-ի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 231 800 մարդ, որից 162 600-ը կամ բնակչության ընդհանուր թվի 70.2%-ն ապրում է գյուղական, իսկ 69 200-ը, կամ բնակչության 28.9%-ը՝ քաղաքային համայնքներում: Համայնքների ընդհանուր թիվը 92-ն է, խոշորացումից հետո կունենանք 57 համայնք և 98 բնակավայր, այսինքն՝ խոշորցման են ենթակա 35 համայնքներ: Մարզի մշտական բնակչությունը 2001-2016թթ-ի ընթացքում նվազել է 2.4%-ով, կամ՝ 5800 մարդով:

Գեղարքունիքի մարզի մասնաբաժինը ընդհանուր ՀՆԱ-ում կազմում է շուրջ 5%: Մեկ շնչին բաժին հասնող համախառն ներքին արդյունքը կազմում է 1մլն 64հազ. 900 դրամ:

Եկամտային հարկի ծավալը կազմում է 4 մլրդ 820 մլն դրամ, մեկ շնչի հաշվարկով՝ 20հազ. 800 դրամ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2016թ-ին կազմել է 31մլրդ 728մլն 800հազ. դրամ, մեկ շնչի հաշվարկով՝ 136 հազ. 900 դրամ: Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից արդյունաբերական նպատակով օգտագործվում է ոսկի (Սոթք), քրոմ (Շորժա), տորֆ, բազալտ, բնական շինանյութ, հանքային ջուր (Գավառ, Լիճք) և այլն: Մետաղական հանքաքարերի արդյունահանման ոլորտում առաջատար դիրք է զբաղեցնում «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊՆ ն:

Մարզի զարգացման գերակա ուղղություններից է գյուղատնտեսությունը:

2016թ-ի մարզի համախառն գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կազմել է շուրջ 153մլրդ դրամ, որից մեկ շնչին բաժին է հասնում շուրջ 660հազ. 100 դրամ:

Այս ոլորտում կատարված աշխատանքներից կառանձնացնելի հատկապես Շորժա համայքում տնկված պտղատու այգիների փաստը: Շուրջ 40 հեկտարի վրա տնկված կաթիլային եղանակով ոռոգվող պտղատու այս այգիները շուկայի համար դեղձ, ծիրան և այլ տեսակների մրգեր կմատակարարեն սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, երբ Արարատյան դաշտավայրում մրգերի վերոնշյալ տեսակներն արդեն սպառված կլինեն: Կարծում եմ, այս օրինակով հնարավոր է մարզում տարածել պտղատու այգիների ծավալները:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ու մարզպետարանի համատեղ աշխատանքի արդյունքում ՀՀ կառավարություն է ներկայացվել 9 ներդրումային ծրագիր՝ 2 մլրդ 56մլն 600հազ. դրամի չափով: Նշված ծրագրերից կառավարության հավանությանն է արժանացել 6-ը: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություններ, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամ են ներկայացվել շուրջ 33 ներդրումային ծրագրեր, որոնք դեռևս քննարկման փուլում են:

Գեղարքունիքի մարզում 2016 թվականին գործել են 532 մանրածախ առևտրի օբյեկտներ՝ շուրջ 1379 աշխատողներով: Նշված օբյեկտների առևտրի շրջանառության ծավալները կազմել են 21մլրդ 600 մլն դրամ, որից 339-ը խանութներ՝ 9մլրդ 800 մլն առևտրային շրջանառությամբ և 98 կրպակ՝ 610 մլն 200հազ. դրամի շրջանառությամբ: Գործել են նաև սպառողական ապրանքների 2 և գյուղատնտեսական արտադրանքի 1 շուկա: Վերջիններիս առևտրական շրջանառությունը կազմել է համապատասխանաբար՝ 1մլրդ 700 մլն և 302մլն 400 հազ. դրամ: Գործել են նաև 92 առևտրային այլ օբյեկտներ՝ 9մլրդ 100մլն դրամ շրջանառությամբ:

Ծառայությունների ծավալը 2016թ-ին կազմել է 14 մլրդ 620մլն 800հազ. դրամ, որը մեկ բնակչի հաշվով կազմում է 63 հազ. 100 դրամ:

Մարզի զարգացման գերակա ուղղություններից է նաև զբոսաշրջությունը:

Նկատի ունենալով, որ դեպի մարզ զբոսաշրջային հոսքերը կրում են սեզոնային բնույթ, ինչի հետևանքով հատկապես

ձմռան ամիսներին ակտիվությունն էական անկում է ապրում, կարծում եմ, կարելի է ստեղծել ձմեռային հանգստի անհրաժեշտ գոտիներ, ինչպես նաև Սևանի ավազանը հազեցնել հայտնի սրճարանների և ժամանացի վայրերի ցանցով:

Կարծում եմ, նման քայլերերը զգալիորեն կակտիվացնեն տուրիստական հոսքերը դեպի Գեղարքունիքի մարզ տարվա բոլոր ամիսներին:

Գեղարքունիքի մարզն իր մեջ ներառում է 92 համայնք, որից 5-ը քաղաքային:

Բացառությամբ Արծվաշեն համայնքի, մարզի մնացած 91 համայնքների ավազանիների կողմից հաստատվել են համայնքի զարգացման ծրագրերը: Բոլոր համայնքներն ունեն էլեկտրոնային անձնագրեր:

Մարզպետարանի ենթակայությամբ գործող 39 բուժհաստատություններից 3-ը բժշկական կենտրոն են, 2-ը՝ պոլիկլինիկա, մեկական ատամնաբուժական պոլիկլինիկա, հիվանդանոց, ծննդատուն, առողջության կենտրոն, իսկ 30-ը ամբուլատորիաներ և առողջության առաջնային պահպանման կենտրոններ:

2016 թվականի ընթացքում ուսումնասիրվել է մարզի բնակչության սոցիալական վիճակը, ի հայտ են բերվել խիստ կարիքավոր ընտանիքները, որոնց նկատմամբ կիրառվել են օգնության տարբեր ծրագրեր:

Մարզի բնակչության 37հազ 91-ը կենսաթոշակառուներ են, որից 18հազ.71-ը հաշմանդամներ, 403-ը՝ զոհված ազատատմարտիկների և 21-ը անհայտ կորած անձանց ընտանիքներ, 7800-ը՝ փախստական ընտանիքներ, որոնց

հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն, 7753 մարդ աշխատանք փնտրող, որից 6509-ը՝ գործազուրկներ են:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ մարզի հաշմանդամ քաղաքացիներին հատկացվել են պրոթեզներ, օրթեզներ, հաշմանդամության սայլակներ, ձեռնափայտեր, լսողական ապարատներ և այլն: 2016թ.-ին մարզում ընտանեկան նպաստ են ստացել 13հազ 244 ընտանիք, 1711-ը՝ սոցիալական նպաստ, իսկ միանվագ դրամական օգնություն՝ 737 ընտանիք:

ՀՀ պետբյուջեից մարզի թվով 1847 առաջին դասարան հաճախող երեխաների տրվել է 46 մլն. 175 հազ.դրամ օգնություն: Մարզի Գավառ, Սևան և ճամբարակ քաղաքներում գործում են բարեգործական 3 ճաշարան՝ 202 շահառուներով: Ավելի քան 746 կարիքավոր ընտանիքներ մարզպետի կողմից ստացել են դրամական օգնություն:

Պարոն վարչապետ, կարևորում եմ նաև ՏՏ ոլորտի զարգացումը, այս ուղղությամբ արդեն ունեցել ենք հանդիպումներ համապատասխան մասնագետների հետ և կա նախնական պայմանավորվածություն, համաձայն որի՝ մինչև տարվա վերջ Վարդենիսում կմեկնարկի ուսումնական ծրագիր, որի հեռահար նպատակն է տեղական կադրերի պատրաստման շնորհիվ ապագայում տեխնոլոգիական կենտրոն ունենալը:

2016 թվականի հուլիս - օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի հաշվին մարզի 307 առավել անապահով, զոհված և վիրավոր ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաներ անվճար կարգով հանգստացել են Հանքավանի մանկական ամառային հանգստյան ճամբարներում: Մարզի 6509 գործազուրկներից

զբաղվածության 5 տարածքային կենտրոնների աջակցությամբ մշտական աշխատանքի են տեղավորվել 578-ը:

2017-2018 ուսումնական տարվա նախաշեմին, զեկուցում են Ձեզ, որ նոր ուսումնական տարին պատշաճ սկսելու առումով լուրջ խնդիրներ չունենք: Ըստ նախնական կոմպլեկտավորման՝ միայն մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորելու են ավելի քան 27 հազ. 800 աշակերտ, որոնցից 3116-ը առաջին դասարանում, որը նախորդ ուսումնական տարվա համեմատ ավել է 90 աշակերտով: Ոլորտի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը կներկայացնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարը:

Մարզի 91 համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը 7 ամսվա կտրվածով կազմում է 88.0%, իսկ տարվա պլանի նկատմամբ՝ 44.7%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած կատարողականն ավել է 12.8%-ով:

2017թ. մայիսի 27-ին կազմակերպված առաջին համապետական շաբաթօրյակի ընթացքում համայնքների կողմից փակվել են 88 աղբավայրեր և աղբակույտեր, մնում է փակելու 25-ը:

Միջոցներ են ձեռնարկվել տնտեսվարող սուբյեկտների կողմից աղբահանության ծառայությունների համապատասխան պայմանագրերի կնքման ուղղությամբ, արդյունքում քաղաքային համայնքներում գործող տնտեսվարող սուբյեկտներից աղբահանության պայմանագրեր են կնքել 844-ը, կամ 58%-ը, նշեմ, որ մարզում գործող 3473 տնտեսվարող սուբյեկտներից, 1458-ը քաղաքային համայնքներում են:

«Մեան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում գործող 870 տնտեսվարող սուբյեկտներից աղբահանության պայմանագրեր են կնքել 247-ը:

Համաձայն համայնքներից ստացված տեղեկատվության՝ աղբահանության աշխատանքները լիարժեք կատարելու համար անհրաժեշտ է 2228 հատ 0,7 խ.մ տարողությամբ աղբամաններ, որի մասին ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, հնարավորության դեպքում համայնքներին աջակցելու համար:

2017թ. հուլիսի 29-ին մարզում անցկացվել է երկրորդ համապետական շաբաթօրյակը, որի աշխատանքներին ներգրավվել են շուրջ 7000 մարդ և 212 միավոր մեքենա մեխանիզմ:

Շաբաթօրյակի ընթացքում փակվել են վերը նշված 25 աղբավայրերից 7-ը:

Ձեր թույլտվությամբ հնարավորություն տանք մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին ներկայացնելու իրենց համակարգման ոլորտների մանրակրկիտ հաշվետվությունը: Միաժամանակ խնդրում եմ նիստի ավարտից հետո թույլ տաք մասնավոր հատվածից երկու ներկայացուցիչների ներկայացնել իրենց իրականացրած ծրագրերը, որոնք Ձեր հավանությանն արժանանալու դեպքում, կարող է օրինակելի համարվել նաև մյուս մարզերի համար:

Շնորհակալություն